

**ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿՈՒՄ**

ԹԱՄԱՍՅԱՆ Ն. Ի.

Բրիտանական թանգարանում պահվող հայերեն ձեռագրերի վերաբերյալ տեղեկություններ ստանում ենք անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերի կազմած անգլերեն ձեռագրացուցակից (հայերեն են միայն ձեռագրերից արված մեջբերումները)¹: 1914 թ. «Արարատ» ամսագրում լույս տեսած գրախոսական-քննադատական հոդվածում հիմնական գծերով ներկայացվում և արժևորվում է աշխատությունը. «Այս անգլիերեն մատեանը կազմուած է գիտնական անթերի խնամքով և ուսումնասիրութեամբ նոյն ինքն պրոֆեսոր Քոնիբերի»²:

Ձեռագրացուցակում նկարագրված հայերեն 149 ձեռագրերն իրենց բովանդակությամբ բազմազան են. սուրբգրային բնագրերից մինչև միջնադարյան հայ նշանավոր հեղինակների գործերը պարունակող մատյաններ: Ա. Դուլուխանյանը, որը ձեռագրացուցակին անդրադարձել է Գրիգոր Նարեկացու քերթվածների առիթով, մասնավորաբար նշում է, որ այն «արդի հայ բանասիրությանը մատուցում է մեծ ծառայություն, քանի որ նրանում կան այնպիսի նյութեր, որոնք մեզանում չեն դրվել գիտական շրջանառության մեջ՝ հավանաբար նյութերի անհասանելի լինելու պատճառով»³:

Ֆ. Կոնիբերն առաջաբանում տեղեկացնում է, թե ինքը ձեռագրերի նկարագրության հարցում որպես օրինակ ունեցել է Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրերի ցուցակը, որը կազմել է նույն միաբանության անդամ Հ. Տաշյանը⁴: Հայագետը, համաձայն ձեռագրացուցակի կազմման սկզբունքի, նշում է ձեռագրում եղած տարբեր հատվածների

¹ Conybeare F., A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913.. Ֆ. Կոնիբերի ձեռագրացուցակի մասին տե՛ս նաև Սահակյան Պ., Երկու դրվագ Ֆ. Կոնիբերի հայագիտական ծառանցությունից, Ե., 2003:

² Տոնայեան Պ., Յուզակ հայ ձեռագրոց Բրիտանական Միւզէում (Արարատ, 1914, համար Բ, փետրվար, էջ 167):

³ Դուլուխանյան Ա., Գրիգոր Նարեկացու քերթվածները Բրիտանական թանգարանում (Պատմա-բանասիրական հանդես, 2003, N 3, էջ 201):

⁴ Conybeare F., նշվ. աշխ., էջ VIII (այսուհետև էջերը կնշվեն մեջբերումներին կից, փակագծերում): Հ. Տաշյանի կազմած ձեռագրացուցակը այն լավագույններից է, որոնցում ամբողջական պատկերացում է տրվում նկարագրվող ձեռագրերի մասին (տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակովբոս Տաշեան Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1895): Ֆ. Կոնիբերը, սակայն, ոչ բոլոր սկզբունքներին է հետևում: Խոսքը գրադարձության համակարգի մի դրվագի մասին է. նա նկատում է, որ արևմտահայերենում որոշ հնչյուններ այլ համարժեքներ ունեն, և եթե ինքն ընդունի դա, ապա Պետրոսը պետք է ներկայացնի որպես Բեդրոս, Պողոսը Բոդոս, Պոնտոսը՝ Բոնդոս: Տեղին չի համարում կիրառել նաև նշանավոր լեզվաբան Հ. Հյուբշմանի նշանային համակարգը (էջ VIII) և զետեղում է գրադարձության մի աղյուսակ (ըստ երևույթին, հենց իր կազմածը)՝ անհրաժեշտ նշումներով. *Equivalents Used for the Letters of the Armenian Alphabet* (էջ VIIIb):

սկզբի, հաճախ նաև վերջի թերթերի համարները, բերում վերնագրերը, անհրաժեշտության դեպքում՝ նաև որոշ տողեր, որոնք հաջորդում են վերնագրին կամ եզրափակում հատվածը, սպա ներկայացնում է դրանց անզլերեն թարգմանությունը: Իսկ հիշատակարանային ուշագրավ մասերը, որոնցով եզրափակվում են գրեթե բոլոր հատվածները, մեջբերում և թարգմանում է ամբողջությամբ:

Ցուցակում մեզ առավելապես հետաքրքրում է 118 թվահամարը կրող ձեռագիրը (թվագրված հայոց ՌԿԴ թվականով), որը զետեղված է «Պատմական և աշխարհագրական երկեր» խորագրի ներքո: Այն ժողովածու է և պարունակում է հատվածներ զանազան գործերից՝ աշխարհագրույց, Մեսրոպ երեց Վայոցձորեցու՝ Մուրբ Ներսես հայրապետի պատմությունը, զրույց, քարոզներ: Ի թիվս սրանց, այստեղ ընդգրկված է նաև XIII դ. հայ հայտնի գործիչ, մատենագիր Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Միսական» երկի ամենաձավալուն և մեծ տարածում ունեցող գլուխը՝ «Վասն մեծի նախարարութեանն Օրբելեանց, եթէ ուստի էին և որպէս, և վասն գալոյ նոցա յաշխարհս յայս, և վասն բազում բանից և գործոց նոցա»: Հայագետը հիշեցնում է, որ Օրբելյանների պատմությունը արդեն հրատարակվել է՝ Այնուհետև գրում է. «At the end of this tract the scribe asks for our good will, and prays us not to curtail the text, if we should transcribe it, and adds (այս հատվածի վերջում գրիչը դիմում է մեր բարի կամքին և աղաչում, որ չաղճատենք տեքստը, եթէ այն ընդօրինակելու լինենք - Թ. Ն.) Ստացւ ՚ի սորայ խօջայ խէրի. Ավղըլէն... և գճագրօ աճատուր էրէցս, որ անուամբ կոչեմ քիյ. և գործովս ոչ» (294ա)⁵: Ձեռագրում կարդում ենք. «Արդ ով ընթերցողք մի լիցի ինձ ոք պարսադէտ որպէս թէ զհւր ազգ յազգէ և պատուէ, և կամ կարծիք ինչ տարցի եթէ աւելի ինչ: ստացուղ սորայ խօջայ խէրի. Ավղըլէն. Ամէն. աւրհնեալ է Աստուած և գճագրօղ Աստուածատուր էրէցս, որ անուամբ կոչեմ քահանայ. և գործովս ոչ»⁷: Ընդգծված տողերը պատկանում են Ստեփանոս Օրբելյանին և ոչ թե գրչին: Պատմության այս գլուխն ավարտվում է պատմագրի՝ ընթերցողներին ուղղված խոսքով, սակայն Աստվածատուր գրիչն այն ամբողջովին չի ընդօրինակել. հենց առաջին նախադասության կեսից կարդում ենք վերջինիս թողած հիշատակու

⁵ "This History of the Orbelians was printed by Saint Martin in the same Mémoires, pp. 56-175" (294ա): Ֆ. Կոնիբերի կողմից հղված աշխատությունն է Mémoires Historiques et Géographiques sur L'Arménie, par M. J. Saint-Martin, t. second, Paris, 1819, որտեղ հեղինակը զետեղել է ֆրանսերեն թարգմանությունը՝ գրաբար զուգահեռ տեքստով, ընդարձակ առաջաբանով և ծանոթագրություններով: Մեն-Մարտենի այս թարգմանությունն, իհարկե, խիստ թերի է: Հետագայում Ստ. Օրբելյանի երկն ամբողջությամբ ֆրանսերեն հրատարակել է Մարի Բրոսեն, առավել մանրամասն տե ս **Դոլոխանյան Ա.**, Մարի Ֆե-իսիտե Բրոսեն հայագետ, Ե., 2002, էջ 23-34:

⁶ Մեջբերումների ուղղագրությունը պահպանված է ըստ Ֆ. Կոնիբերի ձեռագրագուցակի:

⁷ Բրիտանական թանգարանի այս ձեռագրի մանրաձավալները պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետև՝ Մատենադարան) դրսի հավաքածուների 363 թվահամարով (այսուհետև՝ ՄԴՀ, N 363), թ. 89ա-89բ: Ձեռագրի այս և հետագա մեջբերումներում ուղղագրությանը չենք միջամտել, բացի հատուկ անունների մեծատառ գրելուց և համառոտագրությունները բացելուց. բոլոր ընդգծումները մերն են:

թյունը ստացողի և իր մասին⁸: Մինչդեռ Կոնիբերը ամբողջը վերագրել է Աստվածատուր գրչին միտքը ոչ թե թարգմանելով անգլերեն, այլ փոխադրելով:

Իսկ Սո. Օրբեյանը գրում է. «Արդ ո՞վ ընթերցողը մի լիցի ինձ որ պարսաւադէտ որպէս թէ զիր ազգ յարգէ և պատուէ և կամ կարծիք ինչ տարցի, եթէ աւելի ինչ բանս յօդեալ պատուաստեցաք. վկայ է ինձ Տէր, որ յիսկզբանէ ճառիս մինչ ի կատարածս բազում ճշդիւ քննեալ գտաք զըստոյզն. և զոր մեր ականատես էր եղեալ ի բազմաց զսակաւն եւ զճշգրիտն եղեալ կարգեցաք աստ: Եւ թէ զօտարաց ազգաբանութեանց և յիշատակաց, որք վաղ ժամանակօք անցին, փոյթ եղն մեզ, ապա որքա՞ն ևս առաւել զիմն եւ զիմոցն: Եւ զի յայս մատեան զՄիսական աշխարհի գրոյցս կարգեցաք. եւ ի վերջոյ որդիքն Օրբեյեան կացին տէր եւ իշխող սմա. վասն այսորիկ հարկ եղն մեզ եւ զոցայս ճառել. և դու ընկալ անախտ մտօք եւ զմեզ թող առանց մեղադրութեան. փառք յաւիտեանս. Ամէն»⁹:

Ձեռագրի 89բ թերթով ավարտվում է Ստեփանոս Օրբեյանի ստեղծագործությունից կատարված ընդօրինակությունը, որին հաջորդում են երկու տարբեր, միմյանց և նախորդի հետ իմաստային կապ չունեցող հատվածներ («Յոհաննու Ոսկիբերանի ասացեալ ի պատմութեանն»¹⁰, «Վասն բարձրամիտ անապատականին»¹¹): Վերջինից հետո գրիչը էջի ստորին մասում ևս, համաձայն ձևավորված ավանդույթի, թողնում է հիշատակություն իր մասին. «Այլ ես ի յի մեղոք և ամբարտաւան անմիտ Աստուածատուրս և կոխան ամենայն ոսից»¹², իսկ հաջորդ

⁸ Գաղափար օրինակում այս հատվածը, հավանաբար, հենց այդպես էլ կիսատ մտքով ավարտվել է, և գրիչը գետեղել է իր հիշատակարանը: Ընդհանրապես գաղափար օրինակի աղճատված լինելու մասին վկայում է 82ա էջի տողատակում գրչի կատարած նշումը. «օրինակն օեր էր, զշարք թողումք ի տեղն»: Ֆ. Կոնիբերը գրում է, որ 5ա թերթում գրիչն ինչ-որ պատճառով ընդօրինակել է 89ա թերթի երկու երրորդը (տե՛ս էջ 298ա): 5ա թերթում ընդօրինակված է 13 տող՝ «որդոյ Հասանայ. որդոյն Պոռոշա մեծ իշխանին ...» բառերով սկսվող հատվածը մինչև «...և կամ կարծիք ինչ տարցի, եթէ օելի ինչ», որը նույնն է, ինչ 89ա-89բ թերթերում, բացի մեկ բառից (թ. 5ա-ում՝ պարսօադէտ, իսկ թ. 89բ-ում՝ պարսադէտ, այն, սակայն, պետք է լինի պարսաւադէտ, գրիչը չարաշահել է աւօ հնչյունափոխության կիրառումը): Առաջին թերթի ընդօրինակությունը թերևս կատարված է ոչ թե այն օրինակից, որից հիմնական տեքստն է, այլ մեկ ուրիշից: Այս մասին վկայում են երկու թերթերի սկզբնաբառերը. մեկ գաղափար օրինակից արտագրելու դեպքում (սևագրություն կամ գրչափորձ) երկուսն էլ կսկսվեին և կավարտվեին միևնույն բառերով. գուցե գրիչը փորձել է առաջին օրինակից լրացնել հեղինակի հիշատակարանի անավարտ մասը, սակայն տեսնելով, որ սա նույնպես կիսատ է, այդպես էլ թողել է: Այս տեսակետը հայտնեց ձեռագրագետ, Մատենադարանի ավագ գիտաշխատող Արփենիկ Ղազարոսյանը, որի սիրահոժար օգնության համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

⁹ Մատենադարան, ձեռ. N 6271, թ. 285բ-286ա, N 1488, թ. 181բ-182ա, Պատմութիւն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբեյեան արքեպիսկոպոսի Միւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնագարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի, հ. Բ, Փարիզ, 1859 (այսուհետև՝ Օրբեյան-1859), 179-180, Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մ., 1861 (այսուհետև՝ Օրբեյան-1861), էջ 316-317 և այլն:

¹⁰ ՄԴՀ, N 363, թ. 89բ:

¹¹ Նույն տեղում, թ. 96բ:

¹² Նույն տեղում, թ. 97բ:

սկսվում է կիսատ մտքից, ինչն էլ ենթադրել է տվել Ֆ. Կոնիբերին, որ սրանց արանքից թերթ է պակասում, այս վարկածը նա շեշտում է իր աշխատության մեջ՝ երկու տարբեր տողատակերում (294բ, 295ա): Ըստ հայագետի՝ Աստվածատուր գրիչն իր՝ 97բ թերթից սկսվող հիշատակարանում գետեղել է իշխանաց իշխան ("King of Kings") Տարսայիճի թողած արձանագրությունը¹³, որը փորագրված է Քեթիվանքի հարավային որմնասյան վրա հայոց 703 թ., նոյեմբեր 13-ին (էջ 294): Ֆ. Կոնիբերին ամբողջությամբ մեջբերում է 98ա-99բ թերթերի բնագիրը՝ «և զՔեթիվանս իւր սահմանովն. և գրէ ինքեան արձան յիշատակի ի վերա սեանն հարօային...», և տալիս անգլերեն թարգմանությունը: Մեջբերումն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Իսկ Սմայատայ հայրագիր լեալ տանն Աւաքին, խորհի ընդ այլ իշխանացն և տան սպանանել ի ծովայ միջի զԳոնցայն հրամանօ Հուլաու դանին, և ինքն իշխէր ամենայն իշխանութեանց Աւագին»: Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է գրիչն իր հիշատակարանում մեջբերել երկթերթանոց մի հատված: Պատասխանը կարող է տալ միայն վերոհիշյալ ձեռագիրը: Ուշադիր կարդալիս նկատվում է հետաքրքիր մի հանգամանք. ձեռագրի 77բ թերթն ավարտվում է հետևյալ բառերով. «... և տիրէր Տարսայիճն, կողմանն Որոտան. սայ զարդարեաց զմեծ եկեղեցին Տաթևոյ. ի սպասս և ի զգեստս գեղեցիկս և ետ ի սուրբ եկեղեցին զվաղընջուց յափշտակեալ ժառանգութիւնսն զՀաժիս իւր սահմանովն, զՅուր սահմանովն. զԽոտ իւր սահմանով. և զիւր ձեռնատունկ այգին ի Խոտագետ»: Պարզ է, որ այստեղ բերվում է եկեղեցուն՝ կատարված նվիրատվությունների ցանկը, անմիջապես կարդում ենք հաջորդ՝ 78ա թերթից սկսվող միտքը. «և տայ դուստրն նորայ զԽոշաքն ի կնութիւն մեծ խոջային սահիպ դիվանին», չի հասկացվում, թե ով է կնության տալիս Խոշաքին, կամ ում դուստրն է նա. այնպես, ինչպես Ֆ. Կոնիբերին է համարում, թե Տարսայիճի արձանագրությունը Քեթիվանքի հարավային սյան վրա է փորագրված, կարելի է ենթադրել, որ Տարսայիճն է ամուսնացնողը կամ՝ Խոշաքի հայրը, քանի որ նախորդ էջում խոսքը հենց Տարսայիճի մասին է: Ակնհայտ է, որ այս երկու հատվածների միջև իմաստային որևէ կապ չկա և չի կարող լինել, թեպետ թերթերը մեխանիկորեն թերթակալվել են և հաջորդում են միմյանց. անտարակույս, երկու թերթերի միջև պակաս է թերթ կամ՝ թերթեր: Գրիչը, համաձայն մշակված կանոնի, համարակալել է պրակները՝ յուրաքանչյուրի սկզբում և վերջում՝ էջատակում, նշելով հերթական թիվը: Ամեն պրակ կազմված է 12 թերթից. դա երևում է ձեռագիրը թերթելիս¹⁴: Չ պրակը սկսվում է 67ա թերթից և պետք է ավարտվի 78բ-ով, իսկ հաջորդ թերթից սկսվում է նորը՝ Է-ն: Մինչդեռ պրակների վերջին ու առաջին այս թերթերը ձեռագրում 98-ը և 99-ն են: Եթե վերջիններս,

¹³ Ֆ. Կոնիբերին անվանում է գերեզմանագիր՝ *sepulchral inscription* (էջ 294բ), մինչդեռ այն նվիրատվական՝ *donative* արձանագրություն է:

¹⁴ Ձեռագրում չկան վեց թերթ. Է պրակի վերջին, Ը-ի և Թ-ի առաջին ու վերջին, Ժ-ի առաջին թերթերը, ընդ որում՝ առաջին երկուսը պակասում են Ստ. Օրբելյանի Պատմության վերոհիշյալ զլխից ընթրիխակված հատվածից (87բ-ի և 88ա-ի միջև):

որոնք հաջորդում են հիշատակարանին, գետեղենք 77 և 78 թերթերի միջև, ապա բնագրի շարադրանքը կամբողջանա և կդառնա այնպիսին, ինչպիսին կարող ենք կարդալ ձեռագիր և տպագիր մյուս օրինակներում (բնագրային շատ քիչ տարբերություններով)¹⁵: Ահա այսպիսին է վերականգնված այս հատվածի ամբողջական պատկերը. «... Եւ մնայր Սմպատայ աւգնական միայն կրսեր եղբայրն իւր,|| ^{77բ} Տարսայիճն, որ էր այր զարեղ և պատերազմող և յաջողակ ամենայն գործս, նայ և բարեպաշտ և աստուածասէր յոյժ, որ առեալ էր կին իսմայէլացոցն գրուստր տեառն Միւնեաց զԱրուզ խաթունն, որ եղև քրիստոնեայ և էր լի հաւատով և երկիւղած աստուծոյ. յորմէ ծնան որդիք .գ. Էլիկումն, Ստեփանոս, որ կոչեցօ եպիսկոպոսութիւն, և Փախրայրօլան, և տիրէր Տարսայիճն կողմանն Որոտան. սայ զարդարեաց զմեծ եկեղեցին Տաթնոյ ի սպասս և ի զգեստս գեղեցիկս և ետ ի սուրբ եկեղեցին զվաղընջուց յափշտակեալ ժառանգութիւնսն զՀաժիս իւր սահմանովն, զՅուր սահմանովն, զԽոտ իւր սահմանով և զիւր ձեռնատունկ այգին ի Խոտագետ և || ^{98ա} զՔեթիվանս իւր սահմանովն և զրէ ինքեան արձան յիշատակի ի վերա սեանն հարօային որ ունէր օրինակ զայս: Այս գիր յիշատակի և արձան անջնջելի է իմ Տարսայիճիս իշխանաց իշխանի. որդոյն մեծի Լիպարտի. եղբար Սմպատայ մեծ իշխանի կողմնակալի այսմ նահանգի, որ իշխեցող է ի այսմ զաւառաց. ի դրանէն Բարկուշատա մինչև ցահմանն Բրջոնոյ: Միաբանեցայ Տաթնոյ սուրբ առաքելոյս և տվի զիմ հոգոյ մասն ի յիմ սեփական ուխտս ի սուրբ եկեղեցիս, գիւղս .դ.¹⁶ զոր լուալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին. ի Շնհեր, զԽոտն աւան սահմանաւք իւրովք, լերեամբ և դաշտնիւ և ի Խոտագետ զմեր || ^{98բ} ձեռատունկ այգին և զՅուր իւր սահմանովն. լերամբ և դաշտիւ և զՀաժիս իւր սահմանովն, զոր զկէսն գանձագին էի արարեալ. և ի Բորտի, զՔեթիվանս իւր սահմանովն և եպիսկոպոսք տեղոյս տէր Հայրապետ և տէր Սողոմոն, հաստատեցին մեզ յիշատակ և կարգեցին պատարագ յամենայն ամի, .ա. քառասունք. զ.ժ. յայտնութեան, զ.ժ. զատկին, զ.ժ. աստուածածնին, զ.ժ. օաք տներոյն¹⁷, զ.ի. օրն ինձ Տարսայիճիս, և զ.ի. օրն իմ եղբարն Սմպատայ:

Արդ որ յետ մեր կամ ի մերոց, կամ աւտարաց, կամ իշխանաց, կամ ի ձեռնօրաց, այս հաստատ պայմանիս. և անբակ վճռիս խափանել ջանայ, կամ զայն գեղարէքն, || ^{99ա} կամ զայգին յայս եկեղեցոյս հանել խորհի, բաժին ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն եղիցի, և զԿայենին, և զամենայն չարագործաց առջէ պատիժս. և յերից սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի. և թէ տաճիկ յաւագ փոխի ու յափշտակել ջանայ, յաստուծոյ և յիւր փեղամբարէն ապիգար եղիցի, և ընդ աստանայի ի դժոխս իջցէ. և տամբ և

¹⁵ Տե՛ս, օրինակ. Մատենադարան, ձեռ. N 6271, թ. 275ա-277ա, N 1488, թ. 175ա-176ա, Օրբելյան-1859, էջ 163-165, Օրբելյան-1861, էջ 305-306 և այլն:

¹⁶ Այլ օրինակներում՝ գիւղս. գ.: Այստեղ գրչի վրիպակ է, քանի որ թվարկվում են վեց գյուղ:

¹⁷ «ԱՎԱԳ ՏՕՆ կը կոչուին սրբոց չորս հատուկ տօներն որ Աստուածահայտնութեան պահքէն առջ կը կատարուին հետգիտէտ, և կը նկատուին իբր վկայք Ծննդեան Քրիստոսի: Այս չորս տօներն են 1. Դավիթ մարգարե և Հակոբ Տեառնեղբայր, 2. Ստեփանոս Նախավկա, 3. Պետրոս և Պողոս Առաքեալներ, 4. Որդիք Որոտման՝ Յակոբոս Գրլիսաղիբ և Յովհաննէս Ավետարանիչ առաքեալներ» (Օրմանեան Մ., Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, [1957], էջ 13-14):

զուակօք ջնջեալ և բարձրեալ եղիցի, իւր հալալն նայ հարամ և ի .ռ.ռ.ռ., նալաթ լիցի, ի թվականին չիգ. յամսեան նոյեմբերի .ժգ., և է վկայ այսմ վճռիս. տէր Մարգիս Նորավանից եպիսկոպոս և Մարգիս փակակալ սուրբ եկեղեցոյս. և յիմ ազատեաց Հասան Կարապետա որդի, Որոտշահ Լորա թոռն, Միրան Նուէր/¹⁹այ որդի. հաստատէ կաման Աստուծոյ, Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիս:

Յուսովն Աստուծոյ ես Տարսայիճս իմ ձեռագրովս հաստատեցի զընձայքս: Արդ որ յետ իմ յիմ զուակեաց և թոռանց, կամ այլ իշխեցողաց զմեր հոգիս զրկել խորհի և զմեր յոյսն խափանել. և զմեր սահմանեալս քակել ջանայ, յժը. հայրապետացն նգովեալ եղիցի. ի մահ և ի կեանք, և կտրեալ և ջնջեալ լիցի այս կենացս և ի հանդերձելումն. ամէն և եղիցի:

Իսկ Մնկատայ հայրագիր լեալ տանն Աւաքին, խորհի ընդ այլ իշխանացն, և տան սպանանել ի ծովայ միջի գԳոնցայն հրամանօ Հուլաւու դանին. և ինքն իշխէր ամենայն իշխանութեանց Աւագին // ⁷⁸ և տայ զդուստրն նորայ զԽոշաքն ի կնութեան մեծ խօջային սահիպ դիվանին, որ ունէր ի բռին զամենայն յաշխարհս տէրութեան Ապադանին, որ ասի լինել ըստ մեծ դաւթարի դիւանին համարս .ձձ. դումանի, և մի դումանն մի բիւր է, և նայ էր դիւանագլուխ և վերակացու ամենայնին, և էր այս յճժը. թվականին, բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ յոյսն և ակնկալութիւն քրիստոնէից Հուլաւու դանն մեռանի ի յճժգ. թվականին, ընդ նմին և ամէնարհնեալն Տաւրուզ խաթունն կին նորայ, որք դեղակուր եղեն ի բազմահնար խօջայէն ի սահիպէն, որ և գիտէ տէր ոչ ինչ էին ընդհատ բարեպաշտութեամբ քան զԿոստանդիանոս, և զմայրն իւր Հեղինէ...»:

Այս ամբողջական հատվածից պարզ է դառնում, որ Տարսայիճ Օրբեյանը բավականին խոշոր նվիրատվություն է կատարել Տաթևի վանքին և այդ մասին թողել է հիշատակագրություն, որը փորագրել է տվել վանական համալիրի Պողոս-Պետրոս եկեղեցու «ներքուստ. հարավային մույթի հյուսիսային կողմն. յոթ շարք քարերի վրա»¹⁸: Այն, թեև եղծված է, այնուամենայնիվ, ներքևի երկու շարքի վրա կարդացվում են որոշ բառեր: Արձանագրությունն ամբողջությամբ պահպանվել է միայն Ստ. Օրբեյանի երկում, որից «արտագրել են՝ Շահխաթունյան Բ. 354, Ջալալյան Բ. 284-285, Ալիշան 232, Կոստանյանց 116-117 (կրճատումներով)»¹⁹: Իսկ Ֆ. Կոնիբեքը, բնականաբար, պետք է այս արձանագրության մասին ասեր, որ այն փորագրված է Քեթիվանքի հարավային սյան վրա, քանի որ հիշատակվում է Քեթիվանք անունը և տեղը, ուր փորագրված է: Մինչդեռ ամբողջական տեքստից պարզ է դառնում, որ Քեթիվանքը գյուղ է, ոչ թե պաշտամունքային կառույց, որ այն իր բոլոր սահմաններով գտնվում է Սյունյաց աշխարհի Բաղք գավառում²⁰:

¹⁸ Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Ե., 1960, էջ 15:

¹⁹ Նույն տեղում, էջ 16:

²⁰ Տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հինգ հատորով, հ. 5 (Տ-Ֆ), Ե., 2001, էջ 339: Քանի որ գյուղը պատկանում էր վանքին, ուստի Ստ. Օրբեյանն այն չի նշել Պատմության վերջում զետեղված հարկացուցակում:

Ձեռագրի 99ա թերթում կա մի տող (վերջինը), որ բացակայում է Մոսկվայի, Երևանի աշխարհաբար²¹ հրատարակություններում և որոշ ձեռագրերում. «Որոտշահ Լորա թոռն, Միրան Նուերայ որդի»: Այստեղ հիշատակվող անունները պայմանագրի երկու վկաներին են, որոնք Տարսայիճի ազատներից են: Հր. Աճառյանն առաջին երկու անձանունների առիթով նշում է, որ բառանջատումը սխալ է կատարված և մեկի մասին գրում է. «ՈՐՈՏ, ար. (ընթերցվածը անստույգ է, ուստի ծագումն էլ անհայտ):»

- Որոտ, թոռն Շահլորի, հիշվում է իբր վկա, Քեթևանի արձանագրության մեջ, 1274 թ. - Manus. brit. mus. 295ա: Միսական 232բ և Օրբելեան հրտր. 1911, էջ 418 դնում են «Որոտշահ` Լորա թոռն». իսկ տպ. Մոսկուա 1861, էջ 306 այս տողը չունի²²: Նման տեղեկություն է տալիս նաև մյուսի դեպքում. «ՇԱՀԼՈՐ, ա.ր. ծագումն անհայտ: - Շահլոր, որի թոռը Որոտ` հիշվում է իբր վկա, Քեթևանի արձանագրության մեջ, 1274 թ.- Manus. brit. mus. 295ա (ընթերցումը անստույգ է)»²³: Որոտշահը հիշատակվում է նաև Լոր գյուղի «Մպիտակ Խաչ» կամ Լորիկի Խաչ կոչվող կոթողի խաչքարի կամարակալ քարին և խաչքարի տակի վեցտողանոց հիշատակագրային արձանագրության մեջ.

ԵՍ ՈՐՈՏՇԱՀ/ ԳՐԻԳՈՐ ՈՒ ԼՈՐԻԿ ԿԱՆԿՆԵՅԱՔ ԶԽԱԶՍ ՀԱԻՐ ԻՄ ՀԱՅ-ԸՄՊԵՏԻԵՒ ՍՈՒՐ ԻՄ. ՈՎ ԿԱՐԴԱՅՔ Յ/ԻՇԵՑԷՔ Ի ՔԻ. Ի ԹՎ. :ՉԻ: ՄԱՄԻՎ²⁴:

Հր. Աճառյանը օգտվել է նաև Ֆ. Կոնիբերի կազմած այս ձեռագրացուցակից՝ որպես սկզբնաղբյուր, և վերոբերյալ երկու անձանունների դեպքում էլ Տարսայիճ Օրբելյանի՝ Տաթևի նվիրատվական արձանագրության համար ասում է՝ Քեթևանի՝ Իսկ խոսելով իր օգտագործած գրականության մեջ եղած վրիպակների մասին՝ անդրադառնում է նաև Կոնիբերին. «Շատ վրիպակներ կան նույնպես Կոնիբերի հրատարակած երկու ցուցակների մեջ²⁵, որոնց մի մասը անգլիացի գրաշարների հայերեն չիմանալու արդյունք է (որ բարեբախտաբար կարելի է ուղղել հարակից դրված անգլերեն թարգմանության համեմատությամբ և կամ ցանկերի միջոցով), իսկ մյուս մասը հեղինակի անհմտութեան: Օրինակ՝ Լոնդոնի ձեռագրաց ցուցակում, էջ 122ա մի հիշատակագիր գրում է. «Աւետիք արեղան սուղկուզե»: Անշուշտ գիրքը վաճառելու մասին է և Աւետիք արեղան սուղ կուզե, այսինքն թանկ է պահանջում: Իսկ Կոնիբերը դարձրել է գրիչ և գրում է Sulkuz the writer (Սուղկուզ գրիչ) և այս ձևով էլ մտցրել է անվանացանկի մեջ»²⁶:

Կոնիբերի կատարած թարգմանության մեջ կան որոշ վրիպումներ, որոնց պատճառը պետք է հայերեն բնագրում փնտրել. ինչպես՝ բարկուշ

²¹ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986:

²² Աճառյան Հր., Հայոց անձանունների բառարան, հ. Դ, Ե., 1948, էջ 196:

²³ Նույն տեղում, էջ 121:

²⁴ Դիվան հայ վիմագրության, պ. II, էջ 107:

²⁵ Երկու ցուցակներից մեկը Բրիտանական թանգարանին է, մյուսը՝ *Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library by the Rev. Sukias Baronian and F. C. Conybeare, Oxford, 1918.*

²⁶ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. Ա, Ե., 1942, էջ XII:

տա /of Barkust, փոխանակ՝ Բարկուշատայ/of Barkushata կամ՝ օսք տներոյն /of the great Tner (? Houses), փոխանակ՝ աւագ տօներին /of the Great holidays: Երբեմն կետադրութիւնն ու ուղղագրութիւնն են թյուրիմացության առիթ լինում՝ ստորակէտի բացակայութիւնը, հատուկ անունների փոքրատառով գրված լինելը. այսպէս՝ Shnher Khotmawan, Bort Qêthiwang, կամ՝ տանն աւաքին /of the leading house, փոխանակ՝ of the Avag's family, զգոնցայն / the gontz (? count), փոխանակ՝ Gontza և այլն:

Իհարկէ, այս մի քանի մանր վրիպումներն ամեննին չեն ստվերում այն հսկայական աշխատանքը, որ կատարել է հայագետը: Ստեփանոս Օրբէլյանի Պատմության այս գլուխը, որի մասին խոսում է Կոնիբերը ձեռագրի նկարագրության ընթացքում, կարևոր, երբեմն նույնիսկ միակ սկզբնաղբյուրի արժէք ունի միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների պատմության համար: Այս առումով առանձնապէս կարևորվում է անգլիացի գիտնականի կատարած ուսումնասիրությունը, որտեղ երևում են հեղինակի բազմատեղյակությունը և մասնագիտական մոտեցումը քննվող նյութին:

Բարեխղճությամբ ու մեծ խնամքով կազմված այս ձեռագրագուցակը հստակ պատկերացում է տալիս նրանում ներառված բոլոր ձեռագիր մատյանների վերաբերյալ և պետք է արժանին հատուցել հայագետին, որի աշխատանքը դուռ է բացում հետագա ուսումնասիրությունների համար:

ИСТОРИЯ СТ. ОРБЕЛЯНА В КАТАЛОГЕ БРИТАНСКОГО МУЗЕЯ

ТАМАМЯН Н. И.

Резюме

Фредерик Конибер в каталоге Британского музея дает достаточно подробное описание 149 армянских манускриптов. В одной из рукописей (в каталоге-N 118, писец-Астуацатур, год-1616) есть интересный отрывок из "Истории Сюника" Степаноса Орбеляна (XIII в), это глава 66 "О великом нахарарстве Орбелянов...". При переплете два листа (98, 99) из этой главы оказались не на своих местах (между 77 и 78), содержание их Конибер приводит в своем каталоге на грабаре и в английском переводе. Поскольку текст не связывается с предыдущим отрывком, Конибер предполагает, что перед этими листами отсутствует лист или листы. В этом рукописном варианте есть строка «Որոշահ Լորի թոռն, Միրան նուէրայ որդի», которая не встречается во многих других манускриптах и в нескольких печатных изданиях.